

## **Բովանդակություն**

**Գլուխ 1. ՀՊՏՀ ԳՄ-ի դիրքը ՇՄ-ի բարձրագույն մասնագիտական կրթության ծառայությունների շուկայում**

**1.1 ՀՊՏՀ ԳՄ-ն ներկայում**

**1.2 ՀՊՏՀ ԳՄ իրավիճակի վերլուծություն**

**1.3 ՀՊՏՀ ԳՄ-ի տեսակարար կշիռը ՇՄ-ի բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնական ցուցանիշներում**

**1.4 ՇՄ-ի բարձրագույն կրթության պահանջարկի միտումները**

**1.5 Բարձրագույն կրթության առաջին աստիճանից երկրորդին անցման փորձը**

**Գլուխ 2. ՀՊՏՀ ԳՄ-ի ձեռքբերումները և թույլ կողմերը**

**2.1 ՀՊՏՀ ԳՄ-ի առաքելությունը, արժեքներն ու սկզբունքները**

**2.2 ՀՊՏՀ ԳՄ-ի ուժեղ կողմերը**

**2.3 ՀՊՏՀ ԳՄ-ի թույլ կողմերն ու հիմնական մարտահրավերները**

**Գլուխ 3. ՀՊՏՀ ԳՄ-ի 2018-22 թթ. գերակա նպատակները**

**3.1 ՀՊՏՀ ԳՄ-ի գերակա նպատակները և ենթանպատակները**

**Հավելված 1. Բուհի կառուցվածք**

**Հավելված 2. 2014-2018 Մագիստրատուրա ընդունելության կառուցվածք**

## **Գլուխ 1. ՀՊՏՀ ԳՄ-ի դիրքը ՇՄ-ի բարձրագույն մասնագիտական կրթության**

## **ծառայությունների շուկայում**

### **1.1 ՀՊՏՀ ԳՄ-ն ներկայում**

Բարձրագույն կրթության առաջին աստիճանում (բակալավրիատ) ՀՊՏՀ ԳՄ-ն 2018-2019 ուսումնական տարում ընդունելություն է կազմակերպել բարձրագույն կրթության 3 մասնագիտությունների կրթական ծրագրերով և ընդունելության քննությունների արդյունքներով ձևավորել 1 մասնագիտության կրթական ծրագրով կուրս առկա կրթաձևում:

Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում (մագիստրատուրա) ՀՊՏՀ ԳՄ-ն ընդունելություն է կազմակերպել բարձրագույն կրթության 4 մասնագիտությունների կրթական ծրագրերով: Ընդունելության արդյունքներով ձևավորվել են 2 մասնագիտությունների կրթական ծրագրերի կուրսեր առկա կրթաձևում (Գործարար վարչարարություն, Բանկային գործի կազմակերպում):

2018 թվականին ՀՊՏՀ ԳՄ-ում բարձրագույն կրթության երկու աստիճաններում սովորել են 472 ուսանողներ: Նրանցից 366-ը սովորել են բարձրագույն կրթության առաջին աստիճանում (որից 73%-ը առկա և 27%-ը հեռակա կրթաձևերում), 106-ը սովորել են բարձրագույն կրթության երկրորդ (որից 76%-ը առկա և 24%-ը հեռակա կրթաձևերում):

ՀՊՏՀ ԳՄ-ում աշխատում են 63 հիմնական աշխատակից: Նրանցից 27-ը հիմնական հաստիքային պրոֆեսորադասախոսական համակազմի ներկայացուցիչներ են, 36-ը՝ վարչական, օժանդակ աշխատակիցները 8-ն են:

2016 թվականից ՀՊՏՀ ԳՄ-ն իրականացնում է նաև արհեստագործական և միջին մասնագիտական կրթության կրթական ծրագիր:

ՀՊՏՀ ԳՄ-ում ԲԿ յուրաքանչյուր մասնագիտության կրթական տեղի համար սահմանված վարձը 200.000 դրամով զիջում է ԵՊՀ-ի կողմից համանուն մասնագիտության համար սահմանված վարձի չափին: Վարձավճարի միջին չափը Գյումրիում կազմում է 400.000 դրամ Երևանում՝ 600.000 դրամ:

### **1.2 ՀՊՏՀ ԳՄ կառուցվածքի և գործառույթների նկարագրություն**

#### **Դեկանատ**

Դեկանատի կողմից կատարվում են տեղեկանքի տրամադրում ուսանողներին պահանջվող վայրերից, մատյանների նախապատրաստում կազմում և ստուգում ուսանողներից ուսման կտրոնների հավաքագրում, գրանցում, ամփոփաթերթերի նախապատրաստում, տպում, բոլոր մասնագիտությունների ՄՈԳ-երի հաշվարկ, նախկինում կուտակված ակադեմիական պարտքերի հաշվարկ, նրանց դիմումների ընդունում և քննության արդյունքների վերահաշվարկ, ավարտական փաստաթղթերի լրացում եռալեզու տարբերակով:

## Ուսումնական բաժին

Ուսումնական բաժնի կողմից իրականացվում է դասատախտակների ստուգում ( համեմատում օպերատիվ պլանների հետ) և հաստատման նախապատրաստում, ըստ դասատախտակների ուսումնական գործընթացի ամենօրյա հսկում, դասախոսների և ուսանողների հաճախումների հսկում, դասախոսների հաշվետախտակների (տաբելների) ստուգում և հավաստում, դասախոսների անհատական ծանրաբեռնվածության կատարման նկատմամբ վերահսկողություն և հավաստում, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների աշխատանքների վերահսկողության և արդյունքների հավաստում ( ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հրամանների պատրաստում, մատյանների նախապատրաստում, ամփոփիչ քննությունների գրաֆիկների կազմում, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների հավաքագրում և ամփոփում, ամփոփիչ քննությունների արդյունքների ամփոփում, պետական քննական մատյանների ստուգում), ավարտական փաստաթղթերի լրացում, շրջանավարտների եռալեզու ցուցակների ստուգում, դիպլոմների բաշխման վերաբերյալ հաշվետվության կազմում և ապահովում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան ներկայացնելը, դիպլոմների ընդունման և հանձման

ակտի  
կազմում  
և  
այլ  
գործառույթներ:

## Ընդհանուր տնտեսագիտության և բնագիտական առարկաների ամբիոններ

Ամբիոններում կատարվում է առկա փաստաթղթային և էլեկտրոնային տարբերակով առարկայական ծրագրերի հաշվառում և դասակարգում ըստ քանակի և տարիների, առարկայական ծրագրերի տրամադրում դասախոսներին, փաստաթղթաշրջանառություն, դասախոսների համար անվանական-անհատական էլեկտրոնային ֆայլ-թղթապանակների կազմում, անձնական գործերի և անհատական զարգացման պլանների հավաքագրում, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների և առանձին բազաների նախապատրաստում՝ ընտրված թեմաներ ըստ տարիների, հանրային ելույթների անցկացման կոնցեպտի մշակում, ներկայացում, պրակտիկայի վայրերի և ավարտական աշխատանքների համապատասխանության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, քննական հանձնաժողովների անդամների ցանկ-տեղեկագրի կազմում և հետևում, գրաֆիկ-օրացույցի նախապատրաստում, ամբիոնի գրադարանի գրքերի հաշվառում և վարում, քննական տոմսերի պատրաստում, հավաքագրում, տպում և տրամադրում դասախոսներին, ավարտական աշխատանքների թեմաների ներկայացման և ընտրության կազմակերպում, նախորդ տարիներին առաջադրված թեմաների հավաքագրում, կանոնակարգում և դասակարգում, ուսումնական ծրագրերի և դասախոսների կողմից տրված հարցաշարերի համադրում և համապատասխանության ստուգում, անհատական, գիտահետազոտական աշխատանքների թեմաների տրամադրման և իրականացման գործընթացի վերահսկում, ավարտական աշխատանքների կատարման ընթացակարգի կազմում, կատարման ընթացքի վերահսկողություն, դասախոսներին ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նոր թեմաների հավաքագրման մասին ծանուցում, պրակտիկայի հաշվետվության ուղեցույցների

հստակեցում և տրամադրում պրակտիկայի ղեկավարներին, բաց դասերի կազմակերպում, անցկացում, գործնական մասնագետի հրավիրում բաց դասախոսության, այցելություններ ՀՀ Ֆոնդային բորսա և Կենտրոնական բանկ:

#### Տնտեսական բաժին

Բաժնի կողմից իրականացվում են մաքրության, ընդհանուր սպասարկման հետ կապված գործողություններ, նոր ջրածի անցկացման և այլ աշխատանքներ:

#### Անձնակազմի կառավարման և մարդկային ռեսուրսների բաժին

ՄԻ բաժնի աշխատանքները ներառում են աշխատողների ընդունում, արձակուրդի տրամադրում, տեղեկանքների և հաշվետվությունների տրամադրում, աշխատաժամանակի տեղեկագրի տրամադրում, փաստաթղթաշրջանառության կատարում սահմանված կարգի համապատասխան, անձնական գործերի մշակում և պահպանում, աշխատողների պարբերաբար բուժ.գննության կազմակերպում:

#### Հաշվապահություն

Իրականացվում է հաշվապահական հաշվառման վարում, գնման գործընթացի կազմակերպում, հանրային հատվածի հաշվապահական ծրագրի ներդրում և կիրառում:

#### Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի համակարգչային կենտրոնը հանդիսանում է ՀՊՏՀ ԳՄ կառուցվածքային ստորաբաժանում: Կենտրոնի գործունեության նպատակն է՝ ՀՊՏՀԳՄ ուսումնական գործընթացն ապահովելու համար տեղեկատվական տեխնոլոգիաների, համակարգիչների, համակարգչային սարքավորումների, տեղային և համացանցի, ուսումնաստեխնիկական միջոցների սպասարկումն ու արդիականացումը, ինչպես նաև տեղեկատվական-կրթական և վեբ տեխնոլոգիաների զարգացումն ու սպասարկումը:

Համակարգչային կենտրոնը իրականացնում է հետևյալ գործառնությունները՝ համակարգիչների և համակարգչային սարքավորումների գույքագրումը, պարբերական ստուգումը և կենտրոնի տեխնիկական հնարավորության սահմաններում հայտնաբերված անսարքությունների վերացումը, ծրագրային փաթեթների տեղադրումը, թեստավորումը և, անհրաժեշտության դեպքում, տեղադրված փաթեթների նորացումը, տեղային համակարգչային ցանցի ղեկավարման և շահագործման ապահովումը, էլեկտրոնային փոստի շահագործման ապահովումը, համացանց կապի ապահովումը, ՀՊՏՀԳՄ տարբեր ստորաբաժանումներում նոր համակարգիչների, համակարգչային սարքավորումների ու ծրագրային փաթեթների տեղադրումը, ժամանակակից սարքավորումներից ու ծրագրային փաթեթներից օգտվելու ընթացիկ օժանդակությունը և խորհրդատվությունը, տեխնիկական միջոցների ու տեսալսողական սարքավորումների ստուգումը և հայտնաբերված անսարքությունների վերացումը, տարբեր ստորաբաժանումներում ու լսարաններում նոր տեխնիկական միջոցների, տեսալսողական սարքավորումների տեղադրումը, տարբեր միջոցառումների և դասախոսությունների ժամանակ տեխնիկական և համակարգչային սարքավորումներով ապահովումը և սպասարկումը, տեսալսողական ուսումնական նյութերի մշակումը, պահպանումը, պատճենահանումը, բազմացումը, թվայնացումը և տրամադրումը, ձայնագրությունների կազմակերպումը, իրականացնումն ու պահպանումը, ՀՊՏՀԳՄ կայքի կառավարումն ու բարելավումը, կենտրոնի տեղեկատվական համակարգերի միասնական շահագործումը և ինտեգրման աշխատանքների կատարումը, նոր ծրագրերի ու համակարգերի մշակումը և ներդրումը, տեղեկատվական նոր կրթական տեխնոլոգիաների ուսումնասիրումը և ներդրումը, ՀՊՏՀԳՄ տնօրենի հրամաններով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ գործառնությունների իրականացում:

### **1.3 ՀՊՏՀԳՄ-ի տեսակարար կշիռը ՇՄ-ի բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնական ցուցանիշներում**

2017-2018 ուսումնական տարում Շիրակի մարզում գործունեություն են ծավալել 8 բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնցից 6-ն ունեցել են պետական հավատարմագրում:

2017-2018 ուսումնական տարում ՇՄ-ի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորել է 3423 ուսանող:

ՀՊՏՀԳՄ-ում 2017-2018 ուսումնական տարում սովորել են ՇՄ բոլոր բարձրագույն կրթության երկու աստիճաններում սովորողների 13.7%-ը:

ՀՀ բարձրագույն կրթության առաջին աստիճանում բակալավրի կրթական ծրագրերի մասնակցող ուսանողների 89%-ը սովորել է վճարովի, իսկ 11%-ը՝ անվճար հիմունքներով: ՀՊՏՀԳՄ-ում բակալավրիատի ուսանողների 92%-ն է սովորել վճարովի և 8%-ը անվճար հիմունքներով:

Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում մագիստրոսի կրթական ծրագրերի մասնակցող ուսանողների թիվը կազմել է 106, որոնցից 80%-ը սովորել է վճարովի, իսկ 20%-ը անվճար հիմունքներով:

2017-2018 ուսումնական տարում պետական բուհերի հիմնական հաստիքային աշխատակիցների թիվը կազմել է 332: ՀՊՏՀԳՄ հիմնական հաստիքային պրոֆեսորադասախոսական անձնակազմի թիվը 2018 թվականի դրությամբ կազմել է 63: ՀՊՏՀԳՄ-ում համատեղության

հիմունքներով դասավանդել են 21, իսկ ժամավճարի հիմունքներով 1 դասախոս: ՀՀՏՀ ԳՄ-ին բաժին է ընկել ՇՍ բուհերի հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմի շուրջ 18,9%-ը:

ՀՀՏՀ ԳՄ հիմնական հաստիքային դասախոսներից 69%-ի տարիքը չի գերազանցում 55 տարեկանը, 4%-ի տարիքը գտնվում է 56-60 միջակայքում, 13%-ինը՝ 61-65 միջակայքում, 14%-ի տարիքը գերազանցում է 66 տարեկանը:

Ուսանողներ-հիմնական հաստիքային աշխատողներ հարաբերակցությունը ՇՍ բուհերում միջինում կազմել է 1 հաստիքային աշխատակցին 10,3 ուսանող, ՀՀՏՀ ԳՄ-ում՝ 1 հաստիքային աշխատակցին 7,4 ուսանող:

#### **1.4 Շիրակի Մարզի բարձրագույն կրթության պահանջարկի միտումները**

2018-2022թթ. ժամանակահատվածում բարձրագույն կրթության նկատմամբ պահանջարկի անկման միտումը կշարունակվի: Այսպես, եթե հանրակրթական դպրոցից ավագ դպրոց անցումը շարունակի մնալ նույն տիրույթում, ապա 2018-2022 թթ. ընթացքում Շիրակի մարզի դպրոցների շրջանավարտների թիվը կտատանվի 1400-ի միջակայքում: Ավագ դպրոցում որակական ճեղքում արձանագրելու և ընդգրկվածության ցուցանիշի զգալի բարելավման պարագայում միայն հնարավոր կլինի հասնել 1500-1600 շրջանավարտի միջակայքի, եթե հնարավոր լինի կրճատել նաև միգրացիայի ներկայիս տեմպը և բարելավել ծնելիությունը, ինչը թերևս բարդ իրագործելի սցենար է: Ըստ այդմ, առավել իրատեսական է, որ ավագ դպրոցի շրջանավարտները կտատանվեն 1400-1500 միջակայքում:

Այս միտումների պահպանման դեպքում ըստ կանխատեսումների՝ ՀՀՏՀ ԳՄ ընդունվողների միջին թիվը հաջորդող 10 տարիներին կտատանվի 70-90-ի միջակայքում: Հարկ է նշել, որ կանխատեսման սցենարները դիտարկված են բացառապես ներկայիս կարգավորումների շրջանակներում, երբ բակալավր ընդունվում են ինչպես առկա, այնպես էլ հեռակա կրթաձևերով: Այդ տրամաբանությամբ բարձրագույն կրթության առաջին աստիճան ընդունվողների թվում ներառված են ինչպես առկա, այնպես էլ հեռակա կրթաձևերով ընդունվողների ցուցանիշները: Սակայն «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսված է բացառել հեռակա կրթաձևը բարձրագույն կրթության երկու աստիճաններում: 2014-2018 թվականներին բարձրագույն կրթության առաջին աստիճան ընդունվողների թվում հեռակա կրթաձևով ընդունվածների տեսակարար կշիռը տատանվել է 25-30%-ի միջակայքում: ՀՀՏՀ-ում հեռակա կրթաձևում սովորում են բոլոր ուսանողների 26%-ը:

## 1.5 Բարձրագույն կրթության առաջին աստիճանից երկրորդին անցման փորձը **ՀՊՏՀ ԳՄ-ում**

2014-2017 թվականներին ՀՊՏՀ ԳՄ բակալավրիատից մագիստրատուրա անցման պրակտիկան ենթարկվել է Էական փոփոխությունների, ինչպես առանձին կրթաձևերի, այնպես էլ առանձին մասնագիտությունների կտրվածքով:

ՀՊՏՀ ԳՄ բակալավրիատից մագիստրատուրա անցման պրակտիկայում նույն մասնագիտության կրթական ծրագրի անցումը տատանվել է 2014-2018թ-ին միջինը կազմել է 62,2%, իսկ ՀՊՏՀ ԳՄ այլ մասնագիտությունների կրթական ծրագրերին անցումը 23%:

Տարբեր մասնագիտությունների շրջանավարտների մագիստրատուրա անցման ցուցանիշի վերլուծությունից և ձևավորված մագիստրոսական կուրսերի կառուցվածքի հետ համադրումից ակնհայտ է, որ ՀՊՏՀ ԳՄ-ում ձևավորվել են հիմնականում ՀՊՏՀ ԳՄ նույն մասնագիտությունները «սնող» բակալավրիատական մասնագիտություններ, հիմնականում սեփական շրջանավարտներով համալրվող մասնագիտություններ:

ՀՊՏՀ ԳՄ բակալավրիատից մագիստրատուրա անցման պրակտիկայում նույն մասնագիտության կրթական ծրագրի անցումը 2014-2018թ համապատասխանաբար կազմել է համապատասխանաբար 60%, 75%, 68%, 68%, 40%: Այլ մասնագիտության կրթական ծրագրի անցումը 2014-2018թ համապատասխանաբար կազմել է 24%, 0%, 23%, 23%, 40%: Նախորդ տարիների շրջանավարտների ընդունելությունը մագիստրատուրա 2014-2018թ կազմել է 4%, 8%, 0%, 2%, 3%: Այլ բուհերի շրջանավարտների ընդունելությունը 2014-2018թ համապատասխանաբար կազմել է 12%, 17%, 9%, 7%, 17%:

Մի շարք մասնագիտությունների ներքին համալրման ցածր ցուցանիշը փաստում է, որ բակալավրիատական կրթության աստիճանում կրթական ծրագրերի թվի կրճատումը Էական տեղաշարժեր է ձևավորելու ՀՊՏՀ ԳՄ մագիստրատուրայի կառուցվածքում արդեն 3 տարի հետո, ինչը հանգեցնելու է մի շարք մասնագիտացումների ներքին համալրման անհնարինությունը:

## **Գլուխ 2. ՀՊՏՀ ԳՄ առաքելությունը, տեսլականը, արժեքներն ու սկզբունքները**

### **ձեռքբերումները և թույլ կողմերը**

#### **2.1 ՀՊՏՀ ԳՄ-ի առաքելությունը, տեսլականը, արժեքներն ու սկզբունքները**

ՀՊՏՀ ԳՄ-ն առաքելությունն է կրթել որակյալ մասնագետներ՝ նորարարական ուսանողամետ ուսուցման իրականացման միջոցով, խրախուսել կատարելության սկզբունքները սովորողների և աշխատողների շրջանում:

ՀԴՏՀ ԳՄ-ն տեսլականն է դառնալ այնպիսի հաստատություն, որը՝

- Տրամադրի հանրապետության և տարածաշրջանի մակարդակով առաջատար տնտեսության ճյուղերում առկա աշխատուժի պահանջարկին համարժեք կրթություն, որտեղ որակյալ և ժամանակակից կրթությունը ներգրավում է ուսանողներ հանրապետության մյուս մարզերից և արտերկրից՝ ուսանողների թիվը հասցնելով 4000-ի :
- Տրամադրի կրթություն՝ գիտելիքահենք ուսումնական գործընթացի կազմակերպման միջոցով:
- Ունենա միջազգայնացման բարձր մակարդակ
- Հարուստ լինի որակյալ կրթության ապահովման և զարգացման համար անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքներով:
- Լինի Շիրակի մարզում գործող գիտելիքամետ կրթական և գիտահետազոտական կառույց:
- Ժամանակակից պահանջներին բավարարող, մրցունակ, հետաքրքիր լուծումներով ու հաճելի միջավայրով բուհ, որտեղ ուսանողները կրնոդունվեն միայն գիտելիքներ ձեռք բերելու և զարգանալու նպատակով:
- Ունի բանիմաց պրոֆեսորադասախոսական և վարչական աշխատակազմ:
- Կպատրաստի Հայաստանի տնտեսական զարգացման գործում ակտիվ մասնակցություն ունեցող, բարձր ինտելեկտուալ կարողություններով օժտված, մասնագիտական որակյալ գիտելիքներով մասնագետներ, որոնք կկարողանան ապրել, աշխատել ու զարգանալ աշխարհի ցանկացած երկրում:

### **ՀԴՏՀ ԳՄ արժեքներն ու սկզբունքները**

ՀԴՏՀ ԳՄ-ն առաջնորդվում է հետևյալ արժեքներով և սկզբունքներով

- Ազնվություն և թափանցիկություն
- Թափանցիկություն և հաշվետվողականություն
- Հարգանք և սեր գործընկերների և ուսանողների նկատմամբ
- Արդարություն, անաչառություն, ազնվություն
- Պարտաճանաչություն, պատասխանատվություն և պատրաստակամություն
- Մոտիվացում
- Համարագործակցային միջավայր
- Նորարարություն
- Որակի անընդհատ բարձրացում
- Նպատակասլացություն
- Արհեստավարժություն



## 2.2 ՀՊՏՀ ԳՄ-ի ուժեղ կողմերը

### Ուժեղ կողմեր

- Ուսանողների իրավունքների բարձր պաշտպանվածության առկայություն
- Համերաշխ պրոֆեսորադասախոսական անձնակազմ
- Արդարության պահպանում բուհում
- Ղեկավարության աջակցություն աշխատանքներում
- Մեծ թվով ակտիվ և գիտակ ուսանողների առկայություն
- Թիմային աշխատանքի ձգտում
- Ուսանողակենտրոն կառավարման համակարգ
- Բարձր առաջադիմությամբ ուսանողների խրախուսման համակարգ
- Դասախոս- ուսանող պատշաճ հարաբերություններ
- Երիտասարդ և արհեստավարժ կադրերի մեծաթիվ լինել
- բուհերում բազմաթիվ ոչ ֆորմալ կրթական միջոցառումների առկայություն
- ուսանողների և դասախոսների՝ միջազգային փոխանակման ծրագրերին մասնակցելու հնարավորության առկայություն

### Հնարավորություններ

- Բուհի համեմատաբար բարձր վարկանիշ
- Մարզի բուհերի շրջանում առկա պահանջարկ
- Խելացի և զարգացած շրջանավարտների հոսք
- Մասնագիտությունների նկատմամբ առկա մեծ պահանջարկ աշխատաշուկայում
- Բարձր կրթական մակարդակի ձգտում հասարակության շրջանում
- Ապագայի նկատմամբ մեծ հույս
- Որակյալ մասնագետների առկայություն

- Ժամանակակից կրթության մեթոդների ու ձևերի կիրառման մեծ հնարավորություն
- աշխատանքով ապահովված շրջանավարտների բարձր տեսակարար կշիռը ընդհանուր մեջ

### 2.3 ՀՊՏՀ ԳՄ-ի թույլ կողմերն ու հիմնական մարտահրավերները

#### ՀՊՏՀ ԳՄ թույլ կողմեր

- Կրթության որակի ապահովման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների սակավություն
- Կրթության հին մեթոդների կիրառումը
- Գործնական հմտությունների փոխանակման սակավություն
- Պատասխանատու համակարգի արդյունավետության պակաս
- Ուսանողների թվի պակաս
- Ուսումնական- ծրագրերում առկա թերություններ
- Ոչ մրցունակ կադրերի առկայություն բուհում
- Տեխնիկական հագեցվածության ցածր մակարդակ
- Ժամանակակից պահանջներին չբավարարող կրթության առկայություն
- Բարձր մրցակցային միջավայրի առկայություն
- Դասախոսների վերապատրաստման և հմտությունների զարգացման սակավություն
- Ոչ արդիական և հին գրականության առկայությունը

#### ՀՊՏՀ ԳՄ մարտահրավերներ

- Միջազգային համագործակցության ցածր մակարդակ
- Աշխատաշուկայի հետ կապի ցածր մակարդակ
- Ուսումնասիրտադրական և գիտամանկավարժական պրակտիկաների անցկացման ձևական բնույթ
- Գործնական գիտելիքների փոխանցման պակաս

- Կառավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն
- Ժամանակակից որակյալ կրթության համակարգին ինտեգրացման ցածր մակարդակ
- Որակյալ կադրերի պակաս
- Թերի գիտելիքով դասախոսների առկայություն

**Գլուխ 3. ՀՊՏՀ ԳՄ-ի 2018-22 թթ. գերակա նպատակները**

**3.1 ՀՊՏՀ ԳՄ-ի գերակա նպատակները և ենթանպատակները**

Նպատակներ ենթանպատակներ	Գործողություններ				
	2019	2020	2021	2022	2023
<b>Նպատակ 1. ԲՈՒՀ -աշխատաշուկա փոխկապվածության արդյունավետության բարձրացում</b>					
1.1 Ուսանողներին մոտիվացնող համակարգի զարգացում	Թվով 200 գործատուների հետ կապի հաստատման, ակտիվացման և լավագույն ուսանողներին աշխատանքով ապահովման գործողություններ	Համապատասխան պետական մարմիններից և գործատուներից ստացված տեղեկատվության հիման վրա մասնագիտական կողմնորոշման	ԲՈՒՀ-գործատու արդյունավետ փոխգործակցության արդյունավետ մեխանիզմների մշակում և ներդրում՝ ըստ առանձին գործատուների		

	Տնօրենի օգնական ծրագրի գործարկում և շարունակական իրականացում	աշխատանքների համար խիստ կարևոր միասնական տեղեկատվական համակարգի ձևավորում, զարգացում և կիրառում			
1.2 Պրակտիկայի կազմակերպման արդյունավետության բարձրացում	Պրակտիկայի կազմակերպման օպտիմալության բարձրացում ու գործողությունների ծրագրի մասնակցային մշակում՝ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ	Պրակտիկայի կազմակերպման օպտիմալության բարձրացում ու գործողությունների ծրագրի շարունակական իրականացում	Պրակտիկայի կազմակերպման օպտիմալության բարձրացում ու գործողությունների ծրագրի շարունակական իրականացում	Պրակտիկայի կազմակերպման օպտիմալության բարձրացում ու գործողությունների ծրագրի շարունակական իրականացում	Պրակտիկայի կազմակերպման օպտիմալության բարձրացում ու գործողությունների ծրագրի շարունակական իրականացում
1.3 Կիրառական գիտելիքի կարևորության բարձրացում	Դասընթացներում կիրառական մեթոդների տեսակարար կշռի ավելացում առնվազն 20 տոկոսով	Դասընթացներում կիրառական մեթոդների տեսակարար կշռի ավելացում առնվազն 20 տոկոսով	Դասընթացներում կիրառական մեթոդների տեսակարար կշռի ավելացում առնվազն 20 տոկոսով	Դասընթացներում կիրառական մեթոդների տեսակարար կշռի ավելացում առնվազն 20 տոկոսով	Դասընթացներում կիրառական մեթոդների տեսակարար կշռի ավելացում առնվազն 20 տոկոսով

<p>1.4 Շրջանավարտների կարիերայի վերաբերյալ տվյալների բազայի ձևավորման համակարգի զարգացում</p>	<p>Շրջանավարտների կարիերայի վերաբերյալ տվյալների բազայի մշակում Բուհի շրջանավարտների միության հիմնում, արդյունավետ փոխգործակցության համակարգի մշակում և ներդրում</p>	<p>Շրջանավարտների կարիերայի վերաբերյալ տվյալների բազայի պարբերական հավաքագրում և կապի ապահովում</p>			
<p><b>Նպատակ 2 Կրթության որակի բարելավում ի հաշիվ տեխնոլոգիաների թարմացման և մասնագիտական որակի բարելավման</b></p>					
<p>2.1 Չամագործակցության ապահովում այլ առաջավոր բուհերի հետ</p>	<p>Միջբուհական համագործակցության զարգացում՝ միջմասնագիտական և այլ համատեղ ծրագրերի իրականացման միջոցով:</p>	<p>Չեռավար ուսուցման հնարավորությունների ուսումնասիրություն, կիրառում բուհում:</p>			

<p>2.2 Չետագոտությունների որակի բարձրացում, ծավալի մեծացում և գիտահետազոտական նախագծերում ուսանողների ներգրավվածության ընդլայնում</p>	<p>Պարբերաբար հայտարարվող բոլոր հնարավոր տեղական ու միջազգային մրցույթներին մասնակցություն</p> <p>Գիտահետազոտական աշխատանքների և մշակումների ամբողջացում, գիտահետազոտական հոդվածների հրապարակայնության ապահովում</p>	<p>Համագործակցության հաստատում հանրապետական և արտասահմանյան գիտահետազոտական կենտրոնների հետ:</p> <p>Գիտահետազոտական գործունեության մեջ դասախոսների ներգրավվածության մակարդակի բարձրացում, մոտիվացնող մեխանիզմների ներդրում Չետագոտական կարողությունների հնարավորությունների և բուհ-տնտեսություն համագործակցության ընդլայնում</p>	<p>Բուհի</p>		
<p>2.3 Կրթական ծրագրերի որակի բարելավում</p>	<p>Բակալավրի և մագիստրոսական կրթական ծրագրերի հանգմանալից ուսումնասիրություն, ծրագրերում կրկնությունների բացառում</p>	<p>Իրականացնել կրթական ծրագրերի բովանդակային փոփոխությունների իրականացում՝ մայր բուհի հետ համատեղ</p>			

<p>2.4 Մարդկային ռեսուրսների աշխատանքի արդյունավետության բարձրացում</p>	<p>1.Պրոֆեսորադասախոսական անձնակազմի որակի գնահատման և վերահսկման արդյունավետ համակարգի մշակում և ներդրում, 2.Դասախոսների վարկանշավորման համակարգի մշակում և ներդրում</p>	<p>1.Աշխատակիցների աշխատանքից /աշխատանքային հարաբերություններից, պայմաններից և այլն/ բավարարվածության մակարդակի գնահատման և բարձրացման համակարգի մշակում և կիրառում</p>			
<p>2.5 Ուսանողների արտալսարանական և ոչ ֆորմալ շարունակական կրթության համակարգի հիմնում և զարգացում</p>	<p>Ոչ ֆորմալ կրթության ուսուցման ընդլայնում (մասնագիտական և ոչ մասնագիտական)</p>	<p>Առցանց ուսուցման հնարավորության ներդրում Անձնային զարգացման ուսուցման ներդրում, Լեզուների և այլ հմտությունների ուսուցման զարգացում</p>			
<p><b>Նպատակ 3 Բուհի միջազգայնացման ապահովում և ընդլայնում</b></p>					

<p>3.1 Միջազգային ծրագրերին մասնակցության ընդլայնում</p>	<p>1. Օտարերկրյա պետություններում գործող բուհերի հետ կապերի հաստատում ու զարգացում, 2. Համալսարանում իրականացվող միջազգային ծրագրերի վերաբերյալ ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնակցության ապահովում</p>	<p>Միջբուհական համագործակցության պայմանագրերի մշակում</p> <p>Միջազգային կառույցների և ֆոնդերի հետ դրամաշնորհային ծրագրերի համակարգի մշակում և կիրառում</p>			
<p>3.2 Վերապատրաստման հնարավորությունների ընդլայնում միջազգային ծրագրերում</p>	<p>Մշտական կապի և տեղեկատվության փոխանակում արտասահմանյան գործընկերների միջև Դասախոսների օտար լեզուների հմացության բարելավման համակարգ ներդրում</p>				




<p>3.3 Պրակտիկայի մասնակցության ապահովում արտասահմանյան և միջազգային կազմակերպություններում</p>		<p>Պրակտիկայի ոլորտում միջազգային համագործակցության ապահովում</p>			
---	--	---	--	--	--

**Նպատակ 4 ԲՈՒՀ-ի գործունեության արդյունավետության բարձրացում և ենթակառուցվածքների զարգացում**


<p>4.1 Ժամանակակից պահանջներին համապատասխան ենթակառուցվածքների ձևավորում և զարգացում</p>	<p>2.Տարածքի շինությունների վերանորոգում և ենթակառուցվածքների կառուցում:</p> <p>վթարային քանդում, և նոր</p>	<p>1.Բակում հանգստի գոտու ստեղծում,</p> <p>2.Շենքի վերանորոգում և վերազինում ժամանակակից տեսքով՝ կաբինետային համակարգի ներդրում, լսարանների նորաճ կահավորում</p>	<p>Այլ մարզերից եկող ուսանողների և հրավիրված դասախոսների համար հանրակացարանային պայմանների ստեղծում</p>		
--	---	--	---	--	--

<p>4.2 Գրադարանային պայմանների բարելավում</p>	<p>Մասնագիտական գրականության համալրում, էլոկտրոնային գրքերով գրադարանի համալրում, Ընթերցասրահի հիմնում և վերագինում</p>	<p>Առանձին տարածքի հատկացում</p>			
<p>4.3 Տեխնիկական հագեցվածության խնդրի լուծում</p>	<p>Լսարանային և կաբինետային համակարգի ներդրում՝ համապատասխան տեխնիկական հագեցվածությամբ</p>				
<p>4.4 Գործունեության և կառավարման արդյունավետության բարձրացում</p>	<p>Սոցիալական պատասխանատվության համակարգի ներդրում Կազմակերպական կառուցվածքի օպտիմալացում, նոր կառուցվածքի համապատասխան գործունեության կանոնակարգում, Տնօրինություն-գիտխորհուրդ-բուհի ստորաբաժանումներ փոխադարձ կառավարման ու վերահսկողության համակարգի բարելավում</p>	<p>Գործունեության և կառավարման ավտոմատացման մեխանիզմների ներդրում և շարունակական զարգացում</p>			


Հավելված 1. 2014-2018 Մագիստրատուրա ընդունելության կառուցվածք




2014-2015 ուս. տարի




2015-2016 ուս. տարի



2016-2017 ուս. տարի



2017-2018 ուս. տարի



2018-2019 ուս. տարի